

ԹՈՐՈՆԹՈՅԻ ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒԻ ԶԵԿՈՅՅԸ

Ա.Երրորդութիւն Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ

Տարեկան ծխական ժողովին

-----

Պատուարժան անդամներ ծխական ժողովի,

Ամերիկայի Հայոց Առաջնորդութեան Արեւելեան թեմի  
Առաջնորդ Գերշ.Տ.Թորգոմ Ա.Արքեպիսկ.Մանուկեանի անունով, սիրով  
կ'ողջունենք Ձեզ՝ Տարեկան ծխական ժողովը:

Մեր սրտագին ցանկութիւնն է, որ այս պատկառելի ժողովը  
հարազատ արտայայտութիւնը ըլլայ մեր ջերմ բարեպաշտութեան եւ հայու  
եղբայրական անկեղծ ոգիին: Սպի ահազ գրաւականն է Երկնաւոր Հօր,  
յաւիտենական փառքին համար կառուցուած մեր եկեղեցւոյ առաւել բարգա-  
ւաճման եւ բարեկարգութեան:

1974-ի նոր տարուան կենսանորոգ արշալոյսին՝ որդիական  
խոր երախտագիտութեամբ ողջունեցինք Ամենայն Հայոց Հայրապետ Ն.Ս.Օ.  
Տ.Տ. Վազգէն Ա.Սրբազնագոյն Կաթողիկոսի օրհնութիւննք եւ բարեմաղթու-  
թիւնը Ս.Գրական Մայր Հայաստանէն եւ Զրիստոսահիմն Ս.Էջմիածինէն,  
մաղթելով բոլորիս որ Ս.Ժննդեան շնորհները ալ աւելի ծառայութեն ու  
աճին սէրն ու խաղաղ աշխատանքի պտուղները մեր Տիրախնամ համայնքի  
հաւատացեալներու կեանքին մէջ:

Մենք քաջ համոզուած ենք, որ հոգեւոր գործերու դաշտը  
շատ ընդարձակ է եւ պատասխանատու, եւ թէ հազիւ թէ կարողանայինք  
տարուան ամէն մէկ օրը նոյն ծառայութիւնը բերել եւ չազդուիլ երբեք  
մեր շուրջը տիրող անտարբերութիւններէն մնալով միշտ անկեղծ մենք  
մեզի եւ մեր ստանձնած պաշտօնին հանդէպ:

Ահա այս կացութեան մէջ ինչ որ կրնայինք տալ մեզի շնոր-  
հուած կարողութենէն եւ մանաւանդ մեր անսակարկ նուիրումէն, տուինք  
իւրովսանն առանց ակնկալութեան, մեր ժողովուրդին հոգեկան զոհուա-  
կութեան համար:

Մեզի համար մեր գործունէութեան հարազատ դաշտը եղած է  
եկեղեցին: Այս իսկ պատճառով մեր ժամանակին մեծագոյն մասը անցուցինք  
եկեղեցւոյ մէջ, միշտ պատրաստ գտնուելով մեզի վստահուած ժողովուրդին  
պարտականութիւններուն, ի խնդիր անոր հոգեւոր եւ բարոյական սնունդին  
եւ զարգացման:

Եկեղեցին իբրեւ աստուածային հաստատութիւն ունի յաւիտենա-  
կան սկզբունքներ եւ անփոփոխ ուղղութիւն, որմէ պէտք չէ շեղի երբեք:  
Հայց.Ս.Եկեղեցւոյ փառքին, եւ անոր տեւականութեան եւ բարգաւաճման  
սիրոյն, իբրեւ նախանձախնդիր հոգեւորական միշտ պաշտպանեցինք մեր  
եկեղեցւոյ դարաւոր, եւ պատկառելի աւանդութիւնները, գիտակցօրէն եւ  
խոհականութեամբ:

Մեր ձեռքը միշտ հոգեւոր մաճին վրայ պահելով, մեր ոտքին  
տակ արուեստական պատուանդաններ ծարտարելու մտահոգութիւնը չունեցանք  
երբեք: Համայնքային կեանքէն ներս, Տիրոջ ողորմութեամբ, հոգեւոր կարօ-  
տութեանց ընդառաջ երթալով, ծառայելու կոչումը խթանեց մեզ դէպի գործ  
եւ ոչ թէ իշխելու եւ տիրելու սին փառամոլութիւնը:

Մեր գործունէութիւնը եղած է բաց եւ լուսաւոր: Բարի գոր-  
ծերը լոյսի մէջ կը կատարուին եւ պէտք չունին մէկուսի կամ մուլթ թաքս-  
տոցներու:

ծառայութիւն, եւ ապա վարձատրութիւն՝ առանց սակարկութեան: Հաւատացիներ միշտ Աստուածային նախախնամութեան եւ իր ամենագօր կամքին, որ վարձատրէ իր նուիրեալ պաշտօնեաները ըստ իր տնօրինութեան:

Փառք կու տանք Աստուծոյ, որ անտես չըրաւ մեր ժամանակաւոր կեանքի նուիրումը իր սիրոյ եւ խաղաղութեան թագաւորութեան ծաւալումին, որ եկեղեցւոյ գերագոյն նպատակն է:

Եկեղեցին շինարար հաստատութիւն մըն է, եւ շինարար աշխատանք կատարելու համար անհրաժեշտ է ունենալ խաղաղութիւն: Ուր խաղաղութիւն չի, հոն մի սպասէք որեւէ արդիւնաւոր աշխատանք: Գիտնանք ուրեմն խաղաղութեան յարգը. չխախտենք երբեք ուխտը միաբանութեան, որ այնքան մարդկային գոհողութիւններ արժեցին: Անոնք որ մշտնջենաւորեցին իրենց կեանքերը եկեղեցւոյ այս սուրբ կամարներուն տակ, Հայրենիքէն հեռու, Լուսաւորչի կանթեղ մը սրբութեամբ վառած եղան Հայուն հոգեկան աշխարհին վերել, մշտավառ ու պայծառ:

Նախորդ ծխական ժողովին կողմէ ընտրուած մարմինին շինարար աշխատանքներուն շնորհիւ՝ գոհունակութիւնը ունեցանք եկեղեցւոյս դպրաց դասին մէջ ողջունելու անմահն Կոմիտաս Վրդ.ի ձայնագրած Ս. Պատարագի երգեցողութեան ծանօթ, դպիրներու արական խումբը, որ իր կարող ղեկավարի՝ երաժշտագէտ Դաւիթ Վարժապետեանի ջանքերով իր մասնակցութիւնը սկսաւ բերել ի միխթարութիւն հաւատացեալ ժողովուրդին:

Այսպիսով եկեղեցւոյս դպրաց դասը իրեն յատկացուած կիրակիներուն եւ տօնական օրերուն, դարձեալ շարունակեց սիրով եւ հաւատարմութեամբ իր ծառայութիւնը բերել երկարամեայ եւ անձնուէր դպրապետ Մինաս Սէլեանի ղեկավարութեամբ եւ համեստափայլ երգեհոնահարուհի Տիկին Արաքսի Գասարձեանի ընկերակցութեամբ:

Բարբախտութիւնը ունեցանք հայ գիտակից եւ պարտամանաչ ծնողներուն կամաւոր ջանքերուն շնորհիւ վերակազմել եկեղեցւոյս կրտսեր դպրաց դասը, կարող ղեկավարուհի Օրիորդ Լենա Թաշմեանի առաջնորդութեամբ, որ իր գնահատելի ծառայութեամբ ոչ միայն համայնքիս նորահաս եւ մատղաշ սերունդին մէջ արթնցուց հայ աւանդական բարեպաշտութեան հոգին, այլեւ մանաւանդ իր թարմ եւ համարձակ երգեցողութեամբ ծոխացուց մեր համայնքային ձեռնարկներուն գեղարուեստական յայտագիրները:

Երանի թէ մեր ժողովուրդը հաւաքաբար քաջալերէր այս տեսակի դրական գործունէութիւնները, միակ երաշխիքը հայ մանուկը օտարացման եւ այլասեռման վտանգներէն զերց պահելու, այլեւ պարտամանաչ եւ գործունեայ անդամներ պատրաստելու մեր եկեղեցւոյ համար:

Հակառակ մեր ծնողներուն ընդհանուր անտարբերութեան, եւ մասամբ տեղական պայմաններու դժուարութեան՝ Կիրակնօրեայ Դպրոցը իր նուիրեալ ուսուցիչներու գոհողութեամբ շարունակեց նորանոր յաջողութիւններ արձանագրել, հայ մանկան կրօնաբարոյական դաստիարակութիւնը աւելի ամուր հիմերու վրայ դնելով:

Կ' ուզենք մեր սէրն ու արդար գնահատանքը արտայայտել Եկեղեցասէր Տիկնանց Միութեան, որ ահա վերջին տարիներուն տիպար կնոջ եւ հայ մօր անկեղծ եկեղեցասիրութեան գերագոյն ապացոյցը տուաւ, իր գործունէութեան հիմք ընդունելով հայ տիկնոջ աւանդական բարեպաշտութիւնը: Շնորհիւ իր հոգեկան արթնութեան հայ կինը փութաց իր կրօնական պարտականութիւններուն գուզորդել ազգային աւանդութիւնները եւ իր եկեղեցիով մերուիլ հայրենական նուիրական յիշատակներուն: Կը սպասուի որ եկեղեցւոյ եւ համայնքային ղեկավար ղէմբեր աւելի մօտէն քաջալերեն, վաղուան սերունդը ծնող եւ դաստիարակող հայ մայրերուն բոլոր տեսակի ձեռնարկները, որպէսզի եթէ պակսի իրենց նիւթական յաջողութիւնները, կրկին անոնք քաջալերուած զգան իրենց բարոյական յաջողութիւններով:

Մեր մասնաւոր շնորհակալութիւնը կը յայտնենք նոյնպէս Տիկնանց Միութեան այն բարձր ուշադրութեան համար որ ցոյց տուաւ Ս.Ներսէս Աստուածաբանական Կարժարանի չորս երիտասարդ ընծայացուցերուն հանդէպ: Անոնք իրենց առաքելական ճամբորդութեան ընթացքին եղան Թորոնթօ, Երեքշաբթի, Յունիս 4, 1974-ին, եւ խանդավառեցին մեզ, իրենց երիտասարդ կեանքերը ազգին եւ եկեղեցիին ամբողջական ծառայութեան նուիրել խոստանալով:

Այս առթիւ Տիկնանց Միութեան Գերիմ եւ Էօտեմիշլեան ընտանիքները իրենց տուններուն մէջ հիւրասիրեցին մեր ուսանողները, խնայելով անոնց յաւելեալ հիւրանոցի ծախսերը:

Այս առաքելական այցելութիւնը թանկագին պատեհութիւն մը եղաւ անգամ մը եւս յիշեցնելու մեզի, թէ համայնքը ինք պէտք է ընտրէ իր եկեղեցականութեան թեկնածուն, լաւագոյն դաստիարակութեան յանձնելով զայն:

Գիտակից գործակցութեամբը եկեղեցասէր հայ ժողովուրդին, տարակոյս չունինք որ ան արժանի է ունենալու լաւագոյն հոգեւորականները: Անոնց համար ապրուստի հոգը ոչ թէ առաջին այլ վերջին փոյթը պէտք է ըլլայ:

Օգոստոս 30էն-Սեպտեմբեր 2, 1974 Ն.Յ.Ս.Կ.Ա.ի Տարեկան 5րդ Մարզական Խաղերու Շաքաթավերջը, երիտասարդական խանդավառութեամբ լեցուց մեր համայնքը: Այս առթիւ իր շնորհաբեր այցելութեամբ եւ մասնակցութեամբ, պատուեց մեզ թեմակալ Առաջնորդ Ս.Հայրը, եւ Կիրակի Սեպտ. 1, 1974 Ս.Պատարագի ընթացքին Սարկաւազ ձեռնադրեց Ս.Ներսէսի ընծայացուներէն Արթըր Սապունճեանը, Ութըրթաունէն:

Շնորհաւորելի են, հիւրընկալ Մասնամիւղիս Կարգադիր Յանձնախումբի անդամները անխտիր, որոնք ոչ մէկ ջանք խնայեցին, իշխանական հիւրասիրութեան արժանացնելով իրենց Հարաւի եղբայրներն ու քոյրերը:

Հոկտեմբեր 29, 1974-ին շնորհաբեր այցելութիւնը ողջունեցինք թիւրքիոյ Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ.Շնորհք Ս.Արքեպիսկոպոս Գալուստեանի: Ան տուաւ իր օրհնութիւնները այն եղբայրական օժանդակութիւններուն համար, որ մեր համայնքը գիտակից պարտաճանաչութեամբ կը նպաստէ Ս.Խաչ Դպրեվանքին եւ գաւառի կարօտեալներուն, իր այլասիրութեան ուրիշ մէկ փաստը տալով:

Կը գնահատենք Ս.Խաչ Դպրեվանքի Օժանդակի անդամներուն նուիրումն ու արդիւնաւոր աշխատանքը, որ արդէն իսկ վստահութիւնը շահած է հաւատացեալ ժողովուրդին:

Վերջացնելէ առաջ մեր այս զեկոյցը, պատկառելի այս ժողովին ուշադրութեան կ'ուզենք յանձնել սրտագին թելադրութիւն մը՝ եկեղեցին մնայուն վարիչ-քարտուղարով մը ապահովելու հարցը, որ այնքան կենսական է, քանի որ մեր եկեղեցին այսօր հոգեւոր առաքելութեան կեդրոն մը դարձած է աւելի քան 5000 հայորդիներու, որոնք գրեթէ ամէն օր եկեղեցի կը կանչեն զանազան պարտականութիւններու համար: Վստահ ենք, որ այսպիսի պաշտօնեայ մը իր բարերար դերը պիտի ունենայ լաւագոյնս կազմակերպելով համայնքիս ծխական խորհուրդին աշխատանքները:

Այս առթիւ պարտք կը զգանք մեր գնահատանքն ու շնորհակալութիւնները յայտնել պատուարժան ծխական խորհուրդի մէջ մի անդամին, մասնաւորաբար այն անդամներուն, որոնք տարիներ շարունակ անձնուիրաբար ծառայելէ ետք կը հեռանան այսօր, առիթ տալով նոր ուժերուն միեւնոյն ջերմեռանդութեամբ ծառայելու:

Ծխական խորհուրդի հեռացող անդամներուն կը մաղթենք արեւշատութիւն, երջանկութիւն եւ նորանոր յաջողութիւններ իրենց առօրեայ աշխատանքներուն մէջ, եւ սրտագին յաջողութիւններ կը մաղթենք անոնց, որոնք ընտրուելով այսօր պիտի ստանձնեն շարունակելու համար այն գործունէութիւնները, զորս համայնքը պիտի վստահի իրենց:

Յաջողութիւն Ձեր ժողովական աշխատանքներուն, եւ թող Տէրը Ձեր  
բոլոր մտածումները արդիւնաւորէ ի շահ եւ ի փառս Հայց.Ս.Նկեղեցւոյ  
եւ ազգին:

Այսուհետեւ, եղբարք, ողջ լերուք, հաստատուն կացէք, միաբան  
լերուք, խաղաղութիւն արարէք, եւ Աստուած խաղաղութեան եւ սիրոյ  
եղիցի ընդ Ձեզ: (Բ.Կորնթ.ժԳ.11) Ամէն:

Սիրոյ ողջունիւ

Աղօթարար

Յունուար 26, 1975  
Թորոնթօ, Գանատա

Ժիրայր Կրդ. Թաշճեան  
